

# ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Գործազրկության ապահովագրության հայց ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ

## Ստուգացանկ ✓✓✓

**Երբ Ձեր աշխատանքը վերջանա, կամ գործատուն կրճատի աշխատանքի ժամաքանակը, անմիջապես դիմեք գործազրկության ապահովագրության նպաստների համար:**

- Գործազրկության ապահովագրություն հայցի մեկնարկի թվականը կամ ուժի մեջ մտնելու թվականը նույնը ՉԷ, ինչ աշխատանքի ավարտման կամ գործատուի կողմից ժամերի կրճատման թվականը:
- Հայցերը սկսվում են այն շաբաթվա կիրակի օրը, որում ներկայացվել է գործազրկության ապահովագրության դիմումը:

**Հավաքեք տեղեկությունները: Նախքան դիմելը պատրաստի ունեցեք հետևյալ տվյալները:**

### → Ձեր տվյալները՝

- ✓ Սոցիալական ապահովության քարտի համարը
- ✓ Անունը (ներառյալ նախկին անունները [օրինակ՝ ամուսնական կամ օրիորդական ազգանունները]), փոստային հասցեն և հեռախոսահամարը
- ✓ Վարորդական իրավունքի վկայականի կամ ինքնության քարտի համարը
- ✓ Օտարերկրացու գրանցման համարը և գործողության ավարտի ժամկետը, եթե ԱՄՆ քաղաքացի չեք
- ✓ DD 214, եթե վերջին 18 ամսվա ընթացքում ծառայել եք զինված ուժերում

### → Տեղեկատվություն վերջին գործատուի մասին՝

- ✓ Վերջին գործատուն այն ձեռնարկությունը կամ ընկերությունն է, որտեղ ֆիզիկապես աշխատել եք վերջին անգամ կամ, գուցե, դեռ աշխատում եք ոչ լրիվ աշխատաժամանակով
- ✓ Ընկերության անվանումը, ինչպես այն նշված է Ձեր աշխատավարձի վճարման անդորրագրում կամ W-2 ձևում (դա կարող է լինել աշխատավարձերի վճարման գործակալություն կամ կադրերի համալրման գործակալություն)
- ✓ Լրիվ փոստային հասցեն, ներառյալ փոստային ինդեքսը և փաստացի գտնվելու վայրը
- ✓ Ընկերության հեռախոսահամարը և վերադասի անունը
- ✓ Կրճատված ժամաքանակով աշխատելու կամ գործատուի մոտ այլևս չաշխատելու պատճառը

### → Տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին (ԲՈԼՈՐ գործատուները վերջին 18 ամսվա ընթացքում, ներառյալ վերջին գործատուն)

- ✓ ԲՈԼՈՐ գործատուների անունները, ինչպես դրանք նշված են Ձեր աշխատավարձի վճարման անդորրագրում կամ W-2 ձևում
- ✓ Աշխատելու ժամանակաշրջանը (մեկնարկի թվականը և ավարտի թվականը)
- ✓ Աշխատավարձերը և դրանց վճարման կարգը (ժամավճար, շաբաթավճար, ամսավճար)